

**ՈԼՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆԵՐ
<<ԱՆԱՆԻՊ ՇԻՐԱԿԱԾՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ>>**

Հաշվետվություն

Նախագծին մասնակցում են 7-րդ դասարանի աշակերտները:

Նախագծի նպատակը`

1. Սովորողի մոտ ձևավորել և զարգացնել տրամաբանական, լեզվական և արժեքային մտածողություն, գիտելիքների և կարողությունների կիրառելիություն տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:
2. Հայրենասերություն, անհատական և խմբային հետազոտական աշխատանքի ձևավորում:
3. Համագործակցություն (սերտ համագործակցության ապահովում դասավանդող – սովորող – ծնող համակարգում), խնդիրների վերհանում և քննարկում:

Նախագծի խնդիրները`

1. Անդրադարձ VII դարի մաթեմատիկոս, աստղագետ Անանիա Շիրակացու գործունեությանը:
2. Սովորողների օնլայն գործիքների օգտագործման կարողությունների զարգացում:

ՈԼՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՅԸ ՀՊԶ-ի հետ`

Նախագծի ընթացքը`

1. Թեմայի ընտրություն
 - Ենթաթեմաների բաշխում, խմբերի ձևավորում
 - Տեղեկատվության հավաքագրում, մշակում
 - Եզրահանգումների ձևակերպում
 - Հետազոտական հաշվետվության նախապատրաստում
2. Ստեղծել սահիկաշար, պաստառ, գրքույկ, գրել ռեֆերատ Տեղակատվություն հաղորդել կենսագրական տվյալների մասին
Ներկայացնել ասույթներ, խրախճանականներ

3. Խնդիրների լուծում
4. Արդյունքների ամփոփում

Եզրակացություն

Մաթեմատիկական խնդիրներ լուծելիս աշակերտների որոշ մասը հետ է մնում և չի ցուցաբերում համապատասխան հետաքրքրություն: Նրանց կարծիքով մաթեմատիկան ձանձրալի է և անհետաքրքիր: Մաթեմատիկա առարկայի նկատմամբ հետաքրքրություն կարելի է սերմանել հատկապես խելամիտ և հետաքրքիր կազմակերպված արտադասարանական միջոցառումների միջոցով:

Անանիա Շիրակացու խնդիրները առանձնահատուկ դեր ու նշանակություն ունեն, որտեղ մաթեմատիկան ներթափանցում է մարդկային գործունեության գրեթե բոլոր ոլորտները, իսկ թվաբանական մեթոդի կիրառումը (գործողությունների յուրաքանչյուր քայլի արդյունքն ավելի տեսանելի և հստակ է) սովորեցնում է ոչ միայն ստանալ խնդրի ճիշտ պատասխաններ, այլև նպաստում է լուծում գտնելու ստեղծագործական մոտեցման, ռացիոնալ մտածելակերպի զարգացմանը և ցույց է տալիս մաթեմատիկայի դերը տարբեր խնդիրների լուծման գործում: Սովորողները ավելի լավ և արագ լուծում են խնդիրները թվաբանորեն, քան հավասարումների օգնությամբ:

Նախագծային ուսուցումը հնարավորություն տվեց սովորողներին այլ տեսանկյունից դիտարկել մաթեմատիկան, առավել հետաքրքրաշարժ և ակտիվ առաջադրանքներ մշակելու հմտություն զարգացնել: Բարելավվեց սովորողների հաղորդակցման հմտությունը, փոխադարձ աջակցման և արդյունավետ համագործակցման կարողությունը: Հղկվեց բանավոր խոսքը, հաղթահարվեց ելույթով հանդես գալու նկատմամբ թերահավատ վերաբերմունքը, ամրապնդվեց սեփական ուժերի հանդեպ հավատը:

Ուսումնական նախագծի վերջնարդյունքների ներկայացման տեսակները`

Սովորողները հանդես եկան զեկույցով, որի ընթացքում ցուցադրվեց Շիրակացու խնդիրների լուծման տեսագործական կիրառում, ընդգծվեց կապն իրական կյանքի հետ:

Ներկայացվեց սահիկահանդես, ռեֆերատներ, իրախճանակներ, փոքրիկ տեսաֆիլմ և նախագծի շրաջանակներում սովորողների կողմից ստեղծված «Անանիա Շիրակացի» մաթեմատիկական առաջադրանքների գրքուկը:

Գնահատում

Համապատասխան ռուբրիկով սովորողները գնահատվել են նախագծի իրականացման ողջ ընթացքում:

Հանրագումարում սովորողները ստացել են հետևյալ միավորները՝

Արմենակյան Միլիտոն Հայկազի	7-9	8
Զիլինգարյան Գևորգ Վարդանի	7-2	9
Խալաֆյան Մարիա Արթուրի	7-2	9
Աբրահամյան Էվա Արթուրի	7-2	9
Վերոյան Ալեքս Կարենի	7-2	9
Վարդանյան Լիյա Արմենի	7-2	9
Ռեստազյան Մարի Սամվելի	7-2	9

